ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՈՄՈՒՆ ԻՍՏԱԿԱՆ ՊԱՐՏԻԱՅԻ ԿԱԶՄԱՎՈՐՈՒՄԸ ԵՎ ՍՈՎԵՏԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՂԹԱՆԱԿԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Գ. Բ. ՂԱՐԻԲՋԱՆՅԱՆ

Լրացավ Հայաստանի Կոմունիստական պարտիայի կազմավորման և Հայաստանում Սովետական իշխանության հաղթանակի քառասուն տարին։ Հայաստանի աշխատավորությունը ՍՍՌՄ ժողովուրդների մեծ ընտանիքում անհուն խանդավառությամբ, քաղաքական և աշխատանքային բուռն վերելքի պայմաններում դիմավորեց միմյանց հետ սերտորեն կապված այդ պատմական իրադարձությունները, որոնց շնորհիվ ապահովվեց հայ ժողովրդի ազգային վերածնունդը։

Սովետական Հայաստանը Հոկտեմբերյան սոցիալիստական Մեծ ռևոլյուցիայի ծնունդն է, նրա զավակը։ Միայն Մեծ Հոկտեմբերը, հանճարեղ Լենինի ստեղծած Սովետական Միության Կոմունիստական պարտիայի իմաստուն ազգային քաղաքականությունը հնարավոր դարձրին հայ ժողովրդի բազմադարյան ազատագրական պայքարի հաղթանակը։ Հիանալի է ասել հայ ժողովրդի մեծ զավակ, Վ. Ի. Լենինի հավատարիմ աշակերտ Ալ. Մյասնիկյանը. «Սովետական օրիենտացիան լավագույնն է բոլոր օրիենտացիաների մեջ։ Այդ մենք սովորեցինք կոմունիստների պարտիայի շնորհիվ»[1]։

Ահա թե ինչու Հայաստանի աշխատավորները, ամփոփելով իրենց հերոսական պայքարի ու աշխատանքի հոյակապ արդյունքները, երախտագիտության առաջին խոսքն ուղղում են Կոմունիստական պարտիային ու Սովետական կառավարությանը։

* *

Հայաստանի նախասովետական շրջանի ամբողջ պատմությունը հայ բազմաչարչար ժողովրդի հերոսական պայքարի պատմությունն է ընդդեմ ներքին կեղեքիչների և օտարերկրյա նվաճողների, հանուն ազգային ազատագրության ու անկախության։ Հայաստանի հողը առատորեն ներկվել է այդ պայքարի անձնվեր հերոսների արյամբ։ Հայաստանի աշխատավորները կռիվում էին այդ անհամար մարտերի բովում։ Նրանք փրկության ճիշտ ելք էին որոնում։ XVII—XVIII դարերից հայ ժողովրդի ազատագրական պայքարը սերտորեն կապվում է Ռուսաստանի հետ։ Նրա լավագույն զավակները

[1] Ալ. Մյասնիկյան, Ընտիր երկեր, Հայպետհրատ, 1957, էջ 419։

կողմնորոշվում են դեպի Ռուսաստան։ Այդ պայքարի հանապարհին պատմական կարևոր նշանակություն ունեցող իրադարձություն էր Արևելյան Հայաստանի միացումը Ռուսաստանին (1828), որով հայ ժողովրդի մի զգալի հատվածը ազատվեց պարսկական ու թուրքական հետամնաց ֆեոդալական կարգերի տիրապետությունից և կապվեց տնտեսապես ու կուլտուրապես անհամեմատ ավելի առաջավոր, կապիտալիստական զարգացման ուղիով ընթացող և ամենաառաջավոր դեմոկրատական կուլտուրա ունեցող երկրի հետ։ Պատմական այդ ակտը մեծ նշանակություն ունեցավ հայ ժողովրդի ճակատագրի համար։ Ազատվելով ֆիզիկական բնաջնջման սպառնալիքից նա իր բախտը ընդմիշտ կապեց ռուս մեծ ժողովրդի ռևոլյուցիոն պայքարի հետ։ Հայ ժողովուրդը ցնծությամբ ընդունեց Արևելյան Հայաստանի միացումը Ռուսաստանին։ Հայ ժողովրդի լավագույն զավակները քաջ գիտակցել են, որ Հայաստանի տնտեսական, քաղաքական և կուլտուրական հետագա զարգացումը սերտորեն կապված է առաջավոր Ռուսաստանի հետ։ «Ռուս անունը պետք է մեզ համար լինի սուրբ, ինչպես նրա արյունը, որով մենք ազատվել ենք ընդմիշտ»[1],— ասել է հայ մեծ գրող ու լուսավորիչ Խաչատուր Աբովյանը։ Հանճարեղ բանաստեղծ Հովհաննես Թումանյանը գրել է, որ պատմության ուղիղ ընթացքը, մեր ապագան «կապված է Ռուսաստանի հետ, իսկ Ռուսաստանն ինչքան աղատ—էնքան լավ, թե մեզ համար, թե աշխարհքի»[2]։

Սակայն Արևելյան Հայաստանի միացումը Ռուսաստանին բնավ չլուծեց և չէր կարող լուծել հայ ժողովրդի ազատության ու անկախության հարցը։ Այն միայն նախապայմաններ և պատմական միջավայր ստեղծեց այդ հարցի լուծման համար։ Ռուս ժողովուրդը ինքն այն ժամանակ զուրկ էր ազատությունից. նա գտնվում էր ցարերի, աղնվականության, կալվածատերերի ու բուրժուազիայի ծանր լծի տակ. նրա ազատագրության համար պայքարող մարտիկները ենթարկվում էին դաժան հալածանքների։ Էլ ավելի ծանր էր Ռուսաստանի կայսրության մեջ ապրող բազմաթիվ ժողովուրդների վիճակը։

Ցարիզմը բոլոր միջոցներով դաժանորեն արգելակում էր ինչպես մյուս ժողովուրդների, այնպես էլ հայ բազմադարյան ժողովրդի կուլտուրական զարգացումը, հետապնդում էր նրա մայրենի լեզուն, գրականությունը, մամուլը, փակում էր հայկական դպրոցները, բացահայտորեն տանում էր բռնի ռուսացման քաղաքականություն։

Այսպիսի պայմաններում հայ ժողովրդի ազգային ու սոցիալական ազատագրությունը հնարավոր կլիներ միայն ռուսական ցարիզմի տապալման միջոցով։ Ռևոլյուցիոն-ազատագրական պայքարի այս միակ ճիշտ ուղին ինչպես մյուս ճնշված ժողովուրդներին, այնպես էլ հայ բազմաչարչար ժողովրդին ցույց տվեց մարքսիզմ-լենինիզմը, պրոլետարիատի մեծ առաջնորդ Վ. Ի. Լենինը։ Լենինյան դարն էր, որ լիակատար ազատություն բերեց Հայաստանի աշխատավորությանը։

Հայ ժողովրդի պատմական բախտը բանաստեղծորեն լավ է պատկերել մեծ գրող Եղիշե Չարենցը հետևյալ տողերում.

Դարեր շարունակ, ժողովուրդ դու իմ,
Տեսել ես միայն փորձանք ու աղետ։

[1] «Դիվան Խաչատուր Աբովյանի», հատ. 2, Երևան, 1948, էջ 158։
[2] Հովհ. Թումանյան, Երկերի ժողովածու, հատ. 5, Երևան, 1945, էջ 451։

Կարդում ենք միայն գրքերում քո հին
Վեպեր թախծության, տիրության տագնապ։
Դատնությունների երիր դժվարին
Գալիս է հասնում լենինյան դարին[1]։

XX դարի սկզբին Ռուսաստանը դառնում է համաշխարհային ռևոլյուցիոն շարժման կենտրոնը, լենինիզմի հայրենիքը, նոր տիպի պարտիայի՝ բոլշևիկյան պարտիայի հայրենիքը։ Աղգային հարցում Կոմունիստական պարտիայի լենինյան քաղաքականությունը դառնում է մի հզոր զենք պրոլետարիատի դիկտատուրայի համար մղված պայքարում։ Կոմունիստական պարտիան, նրա ստեղծող ու առաջնորդ Վ. Ի. Լենինը ղեկավարելով Ռուսաստանի բոլոր ճնշված ժողովուրդների, այդ թվում նաև Հայաստանի աշխատավորության ազատության ու անկախության համար մղվող հերոսական պայքարը, ճիշտ ուղղություն են տալիս նրան և հասցնում կատարյալ հաղթանակի։

Մարքսիստական լենինյան գաղափարները հայ իրականության մեջ և Հայաստանում սկսել են տարածվել XIX դարի վերջից։ Այդ ժամանակաշրջանում Ռուսաստանում զարգացող կապիտալիզմի ազդեցությամբ զարգացման նոր հունի մեջ են մտնում նաև Անդրկովկասն ու Հայաստանը։ Այստեղ առաջանում են արդյունաբերական ու պրոլետարական կենտրոններ, որոնցից ամենախոշորը Բաքուն էր՝ բանվոր դասակարգի բազմազգ կազմով։

Հայաստանի բանվոր դասակարգը թեև սակավաթիվ էր և թույլ՝ կապիտալիզմի պակաս զարգացման պատճառով, սակայն կապված էր Բաքվի, Թիֆլիսի, Բաթումի և Անդրկովկասի այլ վայրերի առաջավոր բանվորների հետ, կրում էր նրանց քաղաքական բարերար ազդեցությունը։ Անդրկովկասում զարգացող բանվորական շարժումը Ռուսաստանի ամենառևոլյուցիոն պրոլետարիատի հերոսական պայքարի մի անխզելի, բաղկացուցիչ մասն էր։ Հայ բանվորները հենց սկզբից դաստիարակվել են պրոլետարական ինտերնացիոնալիզմի սկզբունքներով, կողք-կողքի աշխատել ու ընդհանուր թշնամիների դեմ պայքարել են ռուս, վրացի, ադրբեջանցի և Անդրկովկասում բնակվող այլ ազգությունների բանվորների հետ միասին, կազմել են դասակարգային պայքարի մեկ, միասնական ընտանիք։ Հայաստանում ռևոլյուցիայի զարգացման գործում ականավոր դեր են խաղացել ռուս ժողովրդի ռևոլյուցիոն զավակները։

Մենք հպարտությամբ ենք նշում, որ Անդրկովկասի բազմազգ բանվոր դասակարգի ռևոլյուցիոն-ազատագրական պայքարը հենց սկզբից գլխավորել է ռուս և համաշխարհային պրոլետարիատի մեծ ուսուցիչ և առաջնորդ Վ. Ի. Լենինը, որ մեր տեղական ռևոլյուցիոն մարքսիստական, բոլշևիկյան խմբերն ու կազմակերպությունները միշտ եղել և մնում են լենինյան պարտիայի անխզելի, բաղկացուցիչ մասերը։

Վ. Ի. Լենինի ստեղծած ու ղեկավարած Պետերբուրգի «Բանվոր դասակարգի ազատագրության պայքարի միությունը» և Պետերբուրգի, Մոսկվայի ու Ռուսաստանի այլ առաջատար կենտրոնների մարքսիստական կազմակերպությունները օրինակ են ծառայել Անդրկովկասի պարտիական կազմակերպությունների համար։ Հենց սկզբից լենինյան գվարդիայի ականավոր գոր-

[1] Եղիշե Չարենց, Ընտիր երկեր, Երևան, 1955, էջ 277։

ծիշների թվումն են եղել Անդրկովկասի ժողովուրդների հավատարիմ զավակներ Վ. Կեցխովելին, Ի. Լալայանցը, Բ. Կնունյանցը, Ի. Ստալինը, Մ. Ցխակայան, Ստ. Շահումյանը, Ս. Ծուլուկիձեն, Ս. Սալանդարյանը, Մ. Ազիզբեկովը և ուրիշներ։ Լենինյան «Իսկրա»-ի հրատարակությունից անմիջապես հետո Անդրկովկասի ռևոլյուցիոն սոցիալ-դեմոկրատները ամբողջովին կանգնում են նրա գիրքերի վրա-և վճռական պայքար ծավալում լենինյան-իսկրայական կազմակերպությունների ստեղծման ու ամրապնդման, բանվորների և գյուղացիների ռևոլյուցիոն շարժման վերելքը ղեկավարելու համար։ Հայ ժողովրդի շատ ռևոլյուցիոն զավակներ իրենց մկրտությունը ստացել են Պետերբուրգի, Մոսկվայի, Կազանի, Կիևի, Դոնի Ռոստովի, Խարկովի և Ռուսաստանի այլ կենտրոնների առաջավոր բանվորների, սոցիալ-դեմոկրատների շարքերում, աշխատել ու պայքարել են մեծ Լենինի հետ միասին և նրա ղեկավարությամբ։

1897—1901 թթ. ստեղծվում են ՌՍԴԲՊ Թիֆլիսի, Բաքվի և Բաթումիի կազմակերպությունները, որոնք իրենց մեջ ընդգրկելով վրացի, հայ, ռուս, ադրբեջանցի և այլ ազգերի ռևոլյուցիոն գործիչներին, մեծ դեր են կատարում նաև հայ աշխատավորության դասակարգային պայքարը կազմակերպելու գործում, օգնում Հայաստանում ևս ստեղծելու սոցիալ-դեմոկրատական խմբակներ, կազմակերպություններ։ Այդ նույն շրջանին է վերաբերում Հայաստանի առաջավոր բանվորների ծանոթությունը Վ. Ի. Լենինի աշխատություններին[1]։

1902 թ. կեսերին ՌՍԴԲՊ Թիֆլիսի և Բաքվի կոմիտեների օգնությամբ Ստ. Շահումյանը, Ռ. Կնունյանցը, Ա. Զուրաբյանը, Ա. Խումարյանը և մյուս հայ լենինյան-իսկրայականները Թիֆլիսում ստեղծում են «Հայ սոցիալ-դեմոկրատների միությունը», որը նույն թվականի հոկտեմբերին հրատարակում է լենինյան-իսկրայական ուղղության առաջին հայերեն թերթը՝ «Պրոլետարիատ» անունով։ «Պրոլետարիատ»-ի առաջին համարում որպես առաջնորդող տպագրվել էր Հայ սոցիալ-դեմոկրատների միության «Մանիֆեստը», որում ասված էր. «Մեր «Միությունը» Ռուսիայի ամեն ծայրերում յուր ցանցերը լայն տարածող «Ռուսիայի սոցիալ-դեմոկրատական բանվորական կուսակցության» ճյուղերից մեկը լինելով, միանգամայն համերաշխ է նրա հետ և նրա հետ միասին կռվելու է հանուն Ռուսիայի պրոլետարիատի շահերի ընդհանրապես, և հայկականի—մասնավորապես»[2]։

Վ. Ի. Լենինը բազմիցս ուրախությամբ նշել է Անդրկովկասի ռևոլյուցիոն մարքսիստների անձնվեր և պարտիայի համար կարևոր գործունեությունը, նրանց հավատարմությունը պրոլետարական ինտերնացիոնալիզմի սկզբունքներին, մեծ օգնություն է ցույց տվել նրանց։ «Մեզ մոտ և Կովկասում,— գրել է Վ. Ի. Լենինը 1913 թ.,— ս.-դ. վրացիները+հայերը+թաթարները+ռուսները աշխատում էին միասին տասը տարուց ավելի միասնական ս.-դ. կազմակերպության մեջ։ Այդ ֆրազ չէ, այլ ազգային հարցի պրոլետարական լուծում։ Միակ լուծումը»[3]։

---

[1] ՍՄԿՊ Կենտկոմին կից Մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտի Հայկական ֆիլիալի դրադարանում խնամքով պահվում է Վ. Ի. Լենինի «Տնտեսական էտյուդներ և հոդվածներ» գրքի առաջին հրատարակությունը (1898), որը դեռևս այն ժամանակ ուսումնասիրել են Այավերդու առաջավոր բանվորները։

[2] «Պրոլետարիատ», 1902, № 1։

[3] Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 35, էջ 79։

«Իսկրա»-ի 1903 թ. փետրվարի 1-ի համարում Վ. Ի. Լենինը հրապարակում է իր «Հայ սոցիալ-դեմոկրատների «Մանիֆեստի» մասին» նշանավոր հոդվածը, որում հանգամանորեն քննարկում է «Պրոլետարիատ»-ի առաջին համարի նյութերը, «Միության» Մանիֆեստը, ողջունում և ուղղություն է տալիս հայ իսկրայականների գործունեությանը։ «Մենք ամբողջ հոգով ողջունում ենք Հայ սոցիալ-դեմոկրատների Մանիֆեստը,— գրում է Վ. Ի. Լենինը,— և մանավանդ ազգային հարցի ճիշտ դրվածքը տալու նրա ուշագրավ փորձը»[1]։ Վ. Ի. Լենինը մշակելով Կոմունիստական պարտիայի թեորիան ու տակտիկան ազգային հարցում, անդադրում հոդ էր տանում պրոլետարական ինտերնացիոնալիզմի հետևողական կիրառման մասին։ «Մարքսիստները,— գրել է Վ. Ի. Լենինը 1913 թ. «Դարձյալ դպրոցական գործն ըստ ազգությունների բաժանելու մասին» հոդվածում,— վճռական պայքար են մղում նացիոնալիզմի բոլոր ձևերի դեմ, սկսած մեր իշխող շրջանների և աջ-օկտյաբրիստական պարտիաների ռեակցիոն, բիրտ նացիոնալիզմից մինչև բուրժուական կամ մանր-բուրժուական պարտիաների ավել կամ պակաս նրբին ու սքողված նացիոնալիզմը»[2]։

Հայ դաշնակցականները, վրացական նացիոնալ-ֆեդերալիստները, ադրբեջանական պանիսլամիստները և այլ բիրտ, նրբին ու սքողված նացիոնալիստներն Անդրկովկասում եղել են ռեակցիոն շարժման ամենաուժեղիմ թշնամիները։ Նրանք ամեն կերպ ձգտում էին անջատել իրարից հայ, ռուս, վրացի, ադրբեջանցի բանվորներին, աշխատավորությանը, կտրել նրանց ռուս պրոլետարիատի ռեակցիոն պայքարից և դրանով իսկ կազմալուծել այդ պայքարը։ Մերկացնելով «Դաշնակցություն» պարտիայի կոնտրռեակցիոն վարքագիծը, Ստ. Շահումյանը 1906 թ. գրել է. «...այդ պարտիան իր բոլոր ուժերով պայքարել է հայ պրոլետարիատի և Կովկասի հայ ռեակցիոն ինտելիգենցիայի բոլոր փորձերի դեմ՝ պայքարելու ընդդեմ բուրժուազիայի և ընդդեմ կառավարության...»[3]։

Կատարելով Վ. Ի. Լենինի ցուցումները, որը բազմիցս ամենայն խստությամբ մերկացրել է Անդրկովկասի բուրժուական ու մանրբուրժուական նացիոնալիստական պարտիաներին ու խմբերին, Անդրկովկասի բոլշևիկները անհաշտ պայքար են մղել նրանց դեմ։ Այդ պայքարում են աճել ու կոփվել անդրկովկասյան մարքսիստները, նոանց ռեակցիոն կազմակերպությունները։

1903 թ. մարտին Կովկասյան սոցիալ-դեմոկրատական բանվորական կազմակերպությունների առաջին համագումարում ընտրվում է ՌՍԴԲՊ Կովկասյան Միութենական Կոմիտե, ամբողջ Կովկասի համար ընդհանուր պարտիական կենտրոն, որն իր աշխատանքներում հետևողականորեն ղեկավարվում է պրոլետարական ինտերնացիոնալիզմի լենինյան սկզբունքներով։ Կովկասյան Միութենական Կոմիտեն հրատարակում էր «Պրոլետարիատի կոչը» թերթը վրացերեն, հայերեն, ռուսերեն լեզուներով, նրա ղեկավարությամբ ստեղծվում և ամրապնդվում են Երևանի, Ալեքսանդրոպոլի, Հաղպատի, Ալավերդու, Կարսի, Սարիղամիշի և այլ պարտիական կազմակերպություններ, որոնք իրենց համարում էին ՌՍԴԲՊ Կովկասյան Միության տեղական խմբերը։

[1] Վ. Ի. Լենին. Երկեր, հ. 6, էջ 411։
[2] Նույն տեղում, հ. 19, էջ 686։
[3] Ստ. Շահումյան, Երկեր, հ. 1, Երևան, 1955, էջ 282—283։

կազմակերպորեն ենթարկվում էին նրան։ Պարտիայի երկրորդ համագումարից հետո, որտեղ Վ. Ի. Լենինի ղեկավարությամբ մենշևիկների դեմ մղված անհաշտ պայքարում առաջացավ նոր տիպի բոլշևիկյան պարտիան, Անդրկովկասի լենինյան-իսկրայական կազմակերպությունները կանգնում են բոլշևիկյան դիրքերում և խոշոր աշխատանք ծավալում իրենց կազմակերպությունների ամրապնդման, աճող ռևոլյուցիոն շարժումների ղեկավարման ուղղությամբ։

Պարտիայի մեծ առաջնորդ Վ. Ի. Լենինը իր վիթխարի գործունեության բոլոր էտապներում անգնահատելի օգնություն էր կազմակերպում Կովկասի բոլշևիկներին, ղեկավար ցուցումներ էր տալիս, նամակագրական և կենդանի կապ պահպանում նրանց հետ։ Վ. Ի. Լենինի նախաձեռնությամբ և ղեկավարությամբ 1903 թ. վերջին ժնևում, ՌՍԴԲՊ Կենտկոմին կից ստեղծվում է հայերեն և վրացերեն լեզուներով սոցիալ-դեմոկրատական գրականության հրատարակության հանձնաժողով, որն իրականացնում է Մարքսի, Էնգելսի, Լենինի մի շարք աշխատությունների կովկասյան ժողովուրդների լեզուներով թարգմանության, հրատարակության և տարածման գործը։

Դեռևս 1904 թ. հոկտեմբերին «Երևանից (հայ իրականությունից)» հոդվածում Ստ. Շահումյանը ուրախությամբ գրում էր. «Հայկական շատ գյուղերում արդեն կան գյուղական երիտասարդության կազմակերպություններ, որոնք կապված են մեր կոմիտեների հետ, ստանում են մեր գրականությունը և լարված ուշադրությամբ հետևում են հայ և այլազգի բանվորների հերոսական պայքարին։ Այս պայքարը,— ավելացնենք վերջում,— արդեն բազմաթիվ փայլուն հաղթանակներ է տարել. նա հաղթանակ կտանի նաև այժմ մոլեգնող, սիրտ կտրատող հայկական ռեակցիայի դեմ»[1]։

Ռուսական առաջին ռևոլյուցիայի տարիներին Հայաստանի բոլշևիկները լենինյան ցուցումների հիման վրա կազմակերպում և ղեկավարում են բանվորների, գյուղացիների և զինվորների պայքարը ցարական ինքնակալության տապալման և պրոլետարիատի ու գյուղացիության ռևոլյուցիոն դեմոկրատական դիկտատուրայի նվաճման համար։ 1906—1907 թթ. պարտիայի IV և V համագումարներին Հայաստանի բոլշևիկները ուղարկել էին իրենց պատգամավորներին՝ Ստ. Շահումյանին, Մ. Ցխակայային, Գ. Սոկոլովսկուն, Ա. Կախոյանին, որոնք գնալով Ստոկհոլմ և Լոնդոն հանդիպումներ են ունենում Վ. Ի. Լենինի հետ, պաշտպանում լենինյան դիրքորոշումները։ 1907 թ. հունվարին լենինյան «Պրոլետարիատ» թերթը նշում էր սոցիալ-դեմոկրատական աշխատանքի շատ արագ աճը Երևանում, Ալեքսանդրոպոլում, Կարսում և Ելիզավետպոլում. բոլշևիկների հաջող աշխատանքը բուրժուական նացիոնալիզմի, դաշնակցության դեմ մղվող պայքարում, աշխատավոր մասսաներին ինտերնացիոնալիստական ոգով դաստիարակելու գործում։

Ցարական իշխանությունների դաժանությունները, բուրժուազիայի և նրա նացիոնալիստական պարտիաների ռեակցիոն ոտնձգություններն անզոր գտնվեցին բոլշևիզմի աճող ազդեցության դեմ։ Մասսաները աստիճանաբար հեռանում էին կոնտրռևոլյուցիոն պարտիաներից և համախմբվում իրենց շահերի միակ ու հետևողական պաշտպանի՝ բոլշևիկյան պարտիայի շուրջը, կանգնում

[1] Ստ. Շահումյան, Երկեր, հ. 1, Երևան, 1955, էջ 52։
[2] Տե՛ս «Պրոլետարիատ», 1907, № 12։

էին նրա լենինյան դրոշի տակ։ Ռեակցիայի ծանր տարիներին, արտահայտելով Կովկասի բոլշևիկների հաստատ համոզմունքը, Ստ. Շահումյանը գրում էր. «Մենք հաստատ համոզված ենք Իլյիչի գիրքավորման ճշտությանը»[1]։

Իմպերիալիստական պատերազմի նախօրյակին, երբ աճող նացիոնալիզմն ու շովինիզմը սպառնում էին վարակել բանվոր դասակարգի և գյուղացիության հետամնաց մասին, Անդրկովկասի բոլշևիկները, նրանց ղեկավարներ Ի. Ստալինը, Ստ. Շահումյանը և ուրիշներ հետևողականորեն հանգես եկան Կոմունիստական պարտիայի լենինյան ազգային ծրագրի փայլուն պաշտպանությամբ, հիմնավորմամբ և պրոպագանդայով։ Վ. Ի. Լենինը բարձր էր գնահատում ազգային հարցում Անդրկովկասի բոլշևիկների տեսական ու գործնական բեղմնավոր գործունեությունը և աշխույժ նամակագրության մեջ էր նրանց հետ։ Ազգային հարցի վերաբերյալ Վ. Ի. Լենինի և Ս. Տ. Շահումյանի նամակագրությունը, Ի. Վ. Ստալինի «Մարքսիզմը և ազգային հարցը» աշխատությունը, Ստ. Շահումյանի «Ազգային կուլտուրական ավտոնոմիայի մասին» բրոշյուրը կարևորագույն ավանդ են մարքսիստական գրականության գանձարանում, պարտիայի տեսական ժառանգության մեջ։

Զինված սոցիալիստական ռևոլյուցիայի լենինյան թեորիայով, Անդրկովկասի և Հայաստանի բոլշևիկները իմպերիալիստական պատերազմի գրժվարին տարիներին մինչև վերջը հավատարիմ մնացին սոցիալիզմի և ինտերնացիոնալիզմի դրոշին։ 1915 թ. հոկտեմբերի 1-ին Վ. Ի. Լենինին և Ն. Կ. Կրուպսկայային ուղղված նամակում Ստ. Շահումյանը վստահեցնում էր պարտիայի առաջնորդին, որ Կովկասի բոլշևիկները հաստատ կանգնած լինելով ինտերնացիոնալիստական դիրքերում, բարձր են պահում բոլշևիկյան դրոշը։ «...Ես և մեր բոլոր ազգականները [բոլշևիկները] բարձր ենք պահում մեր ընտանեկան [բոլշևիկյան պարտիայի] դրոշակը... դուք կարող եք մեր ռեպուտացիայի համար հանգիստ լինել»[2]։

* * *

Պրոլետարական ինտերնացիոնալիզմի դրոշով, ռուս ռևոլյուցիոն պրոլետարիատի եղբայրական օգնությամբ, Հայաստանի բանվորներն ու գյուղացիները, Հոկտեմբերյան սոցիալիստական Մեծ ռևոլյուցիայի նախապատրաստման և իրագործման ժամանակաշրջանում բոլշևիկյան պարտիայի ղեկավարությամբ, Վ. Ի. Լենինի առաջնորդությամբ վճռական պայքարի դուրս եկան Սովետական իշխանության համար։ 1917 թ. հոկտեմբերին տեղի ունեցավ Կովկասի բոլշևիկյան կազմակերպությունների առաջին համագումարը, որն ընթացավ Վ. Ի. Լենինի ցուցումներին, պարտիայի VI համագումարի որոշումներին լիովին համապատասխան։ Համագումարը հսկայական նշանակություն ունեցավ Ադրբեջանում, Վրաստանում և Հայաստանում ռևոլյուցիոն ուժերի հետագա մոբիլիզացման, պարտիական կազմակերպությունների ամրապնդման համար։

1917 թ. հոկտեմբերի 25-ին (նոյեմբերի 7-ին) մեծ Լենինի գլխավորած Կոմունիստական պարտիայի ղեկավարությամբ Ռուսաստանում հաղթանակած սոցիալիստական ռևոլյուցիան մարդկության պատմության մեջ բացեց

[1] Ստ. Շահումյան, Երկեր, հ. 2, Երևան, 1957, էջ 40։
[2] Նույն տեղում, էջ 349։

նոր դարագլուխ՝ սոցիալիզմի և կոմունիզմի դարագլուխը։ Անդրկովկասի ժողովուրդները հսկայական խանդավառությամբ ընդունեցին սոցիալիստական ռևոլյուցիան, որի անմիջական ազդեցությամբ Անդրկովկասում ստեղծվեցին բոլորենպաստ պայմաններ Սովետական իշխանության հաստատման համար։

Բաքուն դարձավ Սովետական իշխանության միջնաբերդը Անդրկովկասում. այստեղ ստեղծվեց Բաքվի հերոսական կոմունան, ժողովրդական Կոմիսարների Սովետ Ստ. Շահումյանի ղեկավարությամբ։ Սովետի կազմում մտան Անդրկովկասի ժողովուրդների հավատարիմ զավակներ, աննկուն լենինյաններ Ա. Ջափարիձեն, Ի. Ֆիոլետովը, Մ. Ազիզբեկովը և ուրիշներ։ Սովետական իշխանության համար ակտիվ պայքարի դուրս եկան նաև Հայաստանի բանվորներն ու գյուղացիները։ Սակայն Ադրբեջանի, Վրաստանի և Հայաստանի ռեակցիոն ուժերը, բուրժուա-նացիոնալիստական պարտիաները՝ մուսավաթականները, դաշնակները, մենշևիկները, էսեռները միավորելով իրենց ջանքերը բացարձակ թշնամական դիրք բռնեցին Հոկտեմբերյան ռևոլյուցիայի հանդեպ։ Օտարերկրյա իմպերիալիստների հովանավորությամբ նրանք ստեղծեցին կոնտրռևոլյուցիոն իշխանության իրենց օրգանները և կատաղի պայքար մղեցին Սովետական իշխանության դեմ. հակառակ ժողովրդական մասսաների կամքի նրանք Անդրկովկասն անջատեցին Սովետական Ռուսաստանից։ Հակասովետական բլոկի այս կոնտրռևոլյուցիոն քայլը պայքարի նոր ալիք բարձրացրեց բանվորների, զինվորների և գյուղացիների մեջ, որոնք իրենց փրկությունը տեսնում էին Սովետական իշխանության մեջ։ «Ինչպես Անդրկովկասում, այնպես էլ բոլոր ռուսական քաղաքներում, որտեղ հայ բրնակչություն կա,— ասված է Ազգությունների Գործերի Ժողովրդական Կոմիսարիատին ուղղված մի զեկուցագրում,— կազմակերպվում են ժողովներ, միտինգներ՝ բողոքելով ընդդեմ Հայաստանը Սովետական Ռուսաստանից անջատելու, ընդդեմ գերմանա-թուրքական նվաճողների և նրանց կամակատար դաշնակների»[1]։ Բոլշևիկյան «Պրավդա»-ն 1918 թ. մայիսին նշում էր, որ Անդրկովկասի «անկախությունը» հայտարարող և գերմանական իմպերիալիզմին օգնության կանչող սեյմի դեմ բորբոքվում է համաժողովրդական շարժման հզոր բոցը. «Հայկական քաղաքներն ու գյուղերը ավելի մեծ համառությամբ հանրաքվե են պահանջում, պնդելով, որ իրենց դելեգատները հեռանան սեյմից»[2]։

Օգտվելով Անդրկովկասի «անկախությունից», օտարերկրյա իմպերիալիստները, գերմանա-թուրքական զավթիչները շարունակում են գրավել ու ավերել Հայաստանի, Վրաստանի ու Ադրբեջանի քաղաքներն ու գյուղերը, կոտորել բնակչությանը։ Մերկացնելով իմպերիալիստական բարբարոսներին և Անդրկովկասի կոնտրռևոլյուցիոն իշխանությունների «անկախության» քաղաքականությունը, Վ. Ի. Լենինը 1918 թ. մայիսին ասել է, որ գերմանական ու թուրքական զավթիչներին «հնարավոր էր առաջ շարժվել ու առաջ շարժվել. ոչ մի բանի չպատասխանելով, ոչ մի բանի ուշադրություն չդարձնելով, հայտարարելով՝ մենք կվերցնենք այն, ինչ կկարողանանք վերցնել, մենք չենք խախտում Բրեստի հաշտությունը, որովհետև անդրկովկասյան բանակը այն չի ճանաչում, որովհետև Կովկասը անկախ է»[3]։

---

[1] ЦГАОР и СС, ф. 1318, д. 619, л. 30։
[2] «Պրավդա», 1918, 16 մայիսի, № 94։
[3] Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 27, էջ 162։

Օտարերկրյա իմպերիալիստների կամքով 1918 թ. մայիսի վերջին ստեղծվում են Վրաստանի, Ադրբեջանի և Հայաստանի «անկախ ռեսպուբլիկաները»։ Մայիսի 28-ը դաշնակցական ավանտյուրիստների կողմից հայտարարվեց «անկախ Հայաստանի», հայկական պետականության «վերածննդի» օր։ Դաշնակների և նրանց օտարերկրյա բազմաթիվ տերերի լծի տակ տառապող այդ «անկախ Հայաստանը» իր գոյության երկու և կես տարիների ընթացքում հասավ լիակատար քայքայման, իսկ հայ ժողովուրդը կանգնեց ֆիզիկական բնաջնջման սպառնալիքի առաջ։ Դա Հայաստանի պատմության ամենամռայլ ժամանակաշրջաններից մեկն էր։ Հայ ժողովրդի մեծ բարեկամ Գ. Կ. Օրջոնիկիձեն 1918 թ. հոկտեմբերի 12-ին Վ. Ի. Լենինին և Ի. Վ. Ստալինին տված հեռագրում վերլուծելով Անդրկովկասի վիճակը հայտնում է.. «Հայաստանի դրությունը ողբերգական է։ Երևանի նահանգի երկու գավառների փոքրիկ կտորի վրա կուտակվել են ավելի քան 600 հազար գաղթականներ, որոնք մասսայաբար կործանվում են սովից ու խոլերայից։ Թուրքերը օկուպացված գավառներում մորթել են բնակչության կեսը... Հայ բնակչությունը օգնություն է սպասում Սովետական Ռուսաստանից»[1]։

1919 թ. Հայաստանի արդյունաբերության համախառն արտադրանքը 1913 թ. համեմատությամբ կրճատվում է 12,2 անգամ, իսկ գյուղատնտեսության արտադրանքը՝ 5,8 անգամ։ Հայաստանի բնակչության նվազումը 1919 թ. յուրաքանչյուր հազար հոգուն կազմում էր 195,5 մարդ։ Դաշնակցականների տիրապետության շրջանում Հայաստանի այն ժամանակվա բնակչության մոտ մեկ երրորդը ոչնչացավ[2]։

Աննկուն ռևոլյուցիոներ Ս. Մուսայելյանը 1920 թ. հունիսի վերջին Երևանի բանտից ՌԿ(բ)Պ Կովկասյան Երկրային Կոմիտեին գրած նամակում մերկացնելով դաշնակցական իրականությունը ասում էր. «Հայկական իրականության սպեցիֆիկ երևույթ հանդիսացող մաուզերիզմն իր ամենագարշելի ձևով այժմ իր գագաթնակետին է հասել։ Երկրում կատարյալ անարխիա է։ Կողոպուտները, բռնությունները, հարբած խրախճանքները ամենօրյա և ամենասովորական երևույթներ են։ Կառավարության ամեն մի գործակալ ունի մաուզերիստների իր խումբը, որոնց վրա նա հենվում է և որոնց հրամանները նա կատարում է։ Երկրի իրական տերերը միմիայն մաուզերիստներն են։ Նրանցից բացի ապահովված չէ ոչ մեկի ոչ կյանքը, ոչ գույքը և ոչ էլ պատիվը»։

Այսպիսի պայմաններում հայ ժողովրդի փրկության միակ ելքը Սովետական Ռուսաստանի օգնությամբ իր երկրում ևս Սովետական իշխանություն հաստատելու մեջ էր։ Այդ բանում Հայաստանի բանվորները, զինվորներն ու գյուղացիները համոզվեցին իրենց ազատագրական պայքարի պատմական փորձով։ Տեսնելով ու զգալով եվրոպական դիպլոմատիության, օտարերկրյա իմպերիալիստների և նրանց գործակալներ դաշնակների և մյուս բուրժուա-նացիոնալիստական և մանրբուրժուական պարտիաների ու խմբերի թաղաքականության դառն հետևանքները, հայ ժողովուրդը 1918—1920 թթ. վերջնականապես ազատագրվելով նրանց ազդեցությունից, անարգանքի սյունին գամեց նրանց և համախմբվեց Կոմունիստական պարտիայի շուրջը, կանգնեց

[1] Г. К. Орджоникидзе. Статьи и речи, т. I, Москва, 1956, էջ 45։

[2] См. „Социалистическое строительство Армянской ССР (1920—1940)". Статистический сборник, Ереван, 1940, էջ 23, 47։

Սովետական իշխանության դրոշի տակ, իր կործանվող նավի հուսալի հանդրվանը գտավ Սոցիալիստական Ռուսաստանի նավահանգստում։

Ռուսաստանի Կոմունիստական (բոլշևիկների) պարտիայի տեղական ջոկատները հանդիսացող Հայաստանի բոլշևիկյան կազմակերպությունները անձնվեր ու համարձակ կերպով ղեկավարում էին բանվորների, աշխատավոր գյուղացիության և զինվորների ռևոլյուցիոն ելույթները, որոնք նոր վերելք են տալիս Հայաստանում 1920 թվականին, և հասցնում Սովետական իշխանության հաղթանակին։

Կոմունիստական պարտիան և Սովետական կառավարությունը, անձամբ Վ. Ի. Լենինը մեծ ուշադրություն են նվիրում դաշնակցականների լծի տակ տառապող հայ ժողովրդի փրկության գործին։ Նրանց ցուցումներով Ֆ. Կ. Օրջոնիկիձեն, Ս. Մ. Կիրովը և Ա. Ի. Միկոյանը ընդհատակյա աշխատանքի դժվար պայմաններում սիստեմատիկաբար կապ են պահպանում Հայաստանի բոլշևիկների հետ, այնտեղ են ուղարկում փորձված պարտիական աշխատողներ։ Խնդիր դնելով ազգային կոմունիստական պարտիաների՝ որպես տեղերում միասնական պարտիայի անրաժան ու հավատարիմ ջոկատների ձևավորման մասին, Վ. Ի. Լենինը, ՌԿ(բ)Պ Կենտկոմը մեծ ուշադրություն են նվիրում նաև Հայաստանի Կոմունիստական (բոլշևիկների) պարտիա ստեղծելուն։ Այս ուղղությամբ կարևոր դեր կատարեց Հայաստանի կոմունիստների 1919 թ. սեպտեմբերյան խորհրդակցությունը, որի նախաձեռնողը ՌԿ(բ)Պ Կովկասյան Երկրային Կոմիտեն էր։

Հայաստանի կոմունիստական կազմակերպությունների առաջին խորհրդակցությունը տեղի ունեցավ Երևանում, անլեգալ պայմաններում, նախկին Ցարսկի փողոցի № 112 տանը (այժմ Սպանդարյան փողոց). մասնակցում էին պարտիայի 400 անդամների ներկայացուցիչներ։ Այդ ժամանակ բոլշևիկյան կազմակերպություններն ամրապնդվել ու հաջողությամբ ղեկավարում էին բանվորների, գյուղացիների և զինվորների ռևոլյուցիոն ելույթները Երևանում, Ալեքսանդրոպոլում, Նոր Բայազետում, Դիլիջանում, Զարաքիլիսայում, Ջալալօղլիում, Զանգեզուրում, Շամշադինում, Իջևանում, Աշտարակում, Սարիղամիշում և Հայաստանի այլ վայրերում։ Սակայն դաշնակների և օտարերկրյա հետախուզությունների դաժան հետապնդումների պայմաններում ոչ բոլոր կազմակերպություններն էն հնարավորություն ունենում Երևան ուղարկել իրենց ներկայացուցիչներին։ Խորհրդակցությունն ընտրում է Հայաստանի կոմունիստական կազմակերպությունների ղեկավար կենտրոն՝ ՌԿ(բ)Պ Հայաստանի Կոմիտե (Արմենկոմ), որի կազմում մտնում էն Ա. Մռավյանը, Ս. Ալավերդյանը, Ս. Կասյանը, Ս. Խանոյանը, Ռ. Շահվերդյանը, Ա. Մելիքյանը, Ղ. Ղուկասյանը։

Հայաստանի կոմունիստների 1919 թ. սեպտեմբերյան խորհրդակցությունը, սկիզբ դնելով Հայաստանի կոմունիստական կազմակերպությունների միավորմանը, խոշոր դեր կատարեց Հայաստանում Սովետական իշխանության հաղթանակի համար մղվող ռևոլյուցիոն պայքարի հետագա ծավալման գործում։

Խորհրդակցությունից հետո նրա մասնակիցներն ու ՌԿ(բ)Պ Հայաստանի Կոմիտեի անդամները շրջագայում էն Հայաստանի քաղաքներն ու գյուղերը, օգնում էն կարգի գցելու պարտիական աշխատանքը, որը վերելք էր ապրում։ Պարտիայի Հայաստանի Կոմիտեի ցուցումներով մի շարք տեղերում գումար-

վում են գավառային ու շրջանային պարտիական կոնֆերանսներ, ստեղծվում են պարտիական կոմիտեներ։ Պարտիայի անդամների թիվը Հայաստանում հասնում է 700-ի։

1920 թ. սկզբին Սովետական Ռուսաստանը վճռական հաղթանակներ է տանում քաղաքացիական պատերազմի ռազմաճակատներում։ Ջախջախելով Դենիկինի բանդաներին, Կարմիր Բանակի զորամասերը հունվարին ազատագրում են Դոնի Ռոստովը և մոտենում Անդրկովկասի սահմաններին։ Սովետական Ռուսաստանի պատմական հաղթանակները ոգևորում ու պայքարի նոր եռանդ են տալիս Հայաստանի աշխատավորներին, որոնք կոմունիստական կազմակերպությունների ղեկավարությամբ ուժեղացնում են իրենց պայքարը դաշնակների դեմ՝ հանուն Սովետական իշխանության։ Այս պայքարի հետագա կազմակերպման գործում խոշոր նշանակություն ունեցավ Հայաստանի բոլշևիկյան կազմակերպությունների առաջին կոնֆերանսը, որը տեղի ունեցավ 1920 թ. հունվարի 18—19-ը Երևանում։ Նրան մասնակցում էին Հայաստանի գրեթե բոլոր քաղաքների և շրջանների՝ Երևանի, Ալեքսանդրոպոլի, Սարիղամիշի, Կարսի, Նոր Բայազետի, Ղազախ-Շամշադինի, Դիլիջանի, Լոռու «չեզոք զոնայի» պարտիական կազմակերպությունների ներկայացուցիչները։ Ներկա էին 22 պատգամավոր, որոնք ներկայացնում էին պարտիայի 1200 անդամի։ Կոնֆերանսը քննարկում է քաղաքական դրության, Հայաստանի պարտիական կազմակերպությունների կազմակերպական կառուցվածքի, լեգալ կազմակերպություններում աշխատանքի, կոմունիստական երիտասարդական կազմակերպությունների և այլ հարցեր։

Կոնֆերանսի ընդունած բանաձևում նշվում էր, որ Հոկտեմբերյան սոցիալիստական Մեծ ռևոլյուցիան բաց է արել ճնշված ժողովուրդների ազատագրության ուղին, որը կտանի դեպի կոմունիզմի հաղթանակը։ Մերկացնելով մենշևիկներին, դաշնակներին ու մուսավաթականներին, որոնք Վրաստանը, Հայաստանը և Ադրբեջանը անջատելով Սովետական Ռուսաստանից, ձգտում էին օտարերկրյա սվինների ուժով վերջ դնել Անդրկովկասում ծավալվող ռևոլյուցիոն շարժումներին, բանաձևը Հայաստանի կոմունիստական կազմակերպությունների առաջնահերթ խնդիրն էր համարում կազմակերպել աշխատավոր մասսաների ռևոլյուցիոն պայքարը դաշնակների դեմ և Սովետական Ռուսաստանի օգնությամբ, դինված ապստամբության միջոցով Հայաստանում հաստատել Սովետական իշխանություն։ «Քաղաքացիական պատերազմն բնդդեմ Հայաստանում տիրապետող դասակարգերի, այնպես ինչպես Վրաստանում ու Ադրբեջանում, և նրանց կողմից կազմակերպված դաշնակցական կառավարության, դաշնակների իշխանության բոնի, ռևոլյուցիոն տապալումը՝ Հայաստանի Կոմունիստական կազմակերպությունների առաջնահերթ խնդիրն է։ Միայն այդ նանապարհով մենք կկարողանանք ամուր հիմք դնել Սովետական իշխանության համար, միայն այդ նանապարհով է հնարավոր փրկել մասսաներին կործանումից...»[1]։

Վերոհիշյալ խնդիրները լուծելու համար կոնֆերանսն առաջարկում էր ամրապնդել կոմունիստական կազմակերպությունները, սերտորեն կապվել

[1] „Резолюция конференции коммунистических организаций РКП в Армении". Баку, 1920, էջ 3։

բանվորական, գյուղացիական, զինվորական մասսաների հետ, ուժեղացնել աշխատանքը արհմիություններում, գյուղացիական կազմակերպություններում, բանակում։

Կարևոր նշանակություն ուներ կոնֆերանսի որոշումը՝ Հայաստանի պարտիական կազմակերպությունների կազմակերպչական կառուցվածքի մասին, որը ելնում էր ՌԿ(բ)Պ Կանոնադրությունից։ Այս հարցի կապակցությամբ ընդունված որոշման մեջ նշվում էր, որ Կովկասի բոլոր պարտիական կազմակերպությունների ղեկավարը ՌԿ(բ)Պ Կովկասյան Երկրային Կոմիտեն է, իսկ Հայաստանի տերիտորիայում գտնվող բոլշևիկյան կազմակերպությունների ղեկավար օրգանը՝ ՌԿ(բ)Պ Հայաստանի Կոմիտեն, որը ենթակա է պարտիայի Կենտրոնական և Կովկասյան Երկրային կոմիտեներին։ Պարտիական կազմակերպությունների հիմքը հանդիսանում էին պարտիական բջիջները՝ կազմված առնվազն 5 անդամից։ Նրանք կազմում էին քաղաքային և գյուղական տեղական կազմակերպություններ։ Բջիջների թվին համապատասխան կոնֆերանսներում ընտրվում էին քաղաքային, շրջանային և ենթաշրջանային կոմիտեներ, գավառներում՝ գավառային կոմիտեներ, որոնք հրահանգ և միջոցներ էին ստանում ՌԿ(բ)Պ Հայաստանի Կոմիտեից։ Հայաստանի Կոմիտեն ղեկավարում էր պարտիական բոլոր կազմակերպությունների կազմակերպչական, քաղաքական, գաղափարական աշխատանքը։

Կոնֆերանսում ընտրվում է ՌԿ(բ)Պ Հայաստանի Կոմիտեի նոր կազմ, որի մեջ մտնում են Ս. Ալավերդյանը, Ա. Մռավյանը, Ս. Կասյանը, Ռ. Շահվերդյանը, Ղ. Ղուկասյանը, Ա. Նուրիջանյանը, Ս. Մարտիկյանը, Ա. Գոգունցը, Ս. Գրիգորյանը։

Կոնֆերանսը ողջույն է ուղարկում Ադրբեջանի, Վրաստանի, Պարսկաստանի և Տաճկաստանի կոմունիստական կազմակերպություններին, որի մեջ ասված էր. «Մեր նպատակն է Ադրբեջանի, Վրաստանի, Տաճկաստանի և Պարսկաստանի կոմունիստական կազմակերպությունների հետ միացյալ ուժերով դուրս քաշել բուրժուական-նացիոնալիստական կուսակցությունների ձեռքից, ինչպես «Դաշնակցության», «Մուսավաթի», մենշևիկների և թուրք նացիոնալիստների, բանվորա-գյուղացիական մասսաները, ֆրոնտ կազմել այդ երկրներում կոմունիստական հեղափոխության համար և մեծ կարմիր Ռուսաստանի աջակցությամբ խորտակելով «Անտանտի» բոլոր սև ու մութ ուժերը՝ անցնել մեր թշնամիների դիակների վրայով ու միանալ համաշխարհային մեծ ու խաղաղ կոմունիստական ընտանիքին»[1]։

Հունվարյան կոնֆերանսը ավարտում և ամրապնդում է Հայաստանի կոմունիստական կազմակերպությունների միավորման գործը մեկ ղեկավար օրգանի՝ ՌԿ(բ)Պ Հայաստանի Կոմիտեի շուրջը և նրանց նպատակամղում դեպի զինված ապստամբություն։

Կոնֆերանսից հետո Հայաստանի բոլշևիկյան կազմակերպություններն իրենց աշխատանքի հիմքում դնում են դաշնակների և նրանց օտարերկրյա տերերի դեմ զինված ապստամբության նախապատրաստումը, որը պետք է սկսվեր Կարմիր Բանակի զորամասերի Հայաստանի սահմաններին մոտենալիս և նրանց օգնությամբ ավարտվեր սովետական կարգերի հաստատումով։

---

[1] «Новый мир» (Баку), 1920, № 20.

1920 թ. գարնանը, երբ Կարմիր Բանակի զորամասերը Հյուսիսային Կովկասում հաջողությամբ լիկվիդացնելով սպիտակ բանդաներին մոտենում են Անդրկովկասին, տեղական ժողովուրդների ներկայացուցիչները դիմում են Սովետական Ռուսաստանին, օգնություն խնդրելով նրանից՝ բուրժուա-նացիոնալիստական կառավարությունների և օտարերկրյա զավթիչների լծից ազատագրվելու համար[1]։

1920 թ. ապրիլի 28-ին կարմիր զորքերի ակտիվ օժանդակությամբ Ադրբեջանի ապստամբ աշխատավորությունը տապալում է ատելի մուսավաթականների և նրանց օտարերկրյա տերերի լուծը և Ադրբեջանում հաստատում Սովետական իշխանություն։ Եղբայրական ժողովրդի այս պատմական հաղթանակը բուռն խանդավառություն է առաջացնում Հայաստանի աշխատավորության մեջ, հզոր խթան է հանդիսանում ռևոլյուցիոն շարժումների նոր վերելքի համար։ «Բաքուն ընկավ, հերթը Երևանինն է»,— ասում էին նրանք։

ՌԿ(բ)Պ Կովկասյան Երկրային և Հայաստանի կոմիտեների ղեկավարությամբ տեղական պարտիական կազմակերպությունները նախապատրաստում են մասսաներին վճռական գրոհի։ Այդ գրոհի ճանապարհին կարևորագույն ռևոլյուցիոն իրադարձություն էին մայիսմեկյան ցույցերը, որոնք կազմակերպվեցին և անցկացվեցին բոլշևիկների ղեկավարությամբ։

1920 թ. հունիսի սկզբին Վ. Ի. Լենինին ուղարկած հեռագրում Տ. Կ. Օրջոնիկիձեն նշում էր, որ Մայիսի մեկը Հայաստանում անցավ բացառապես ՌԿՊ կոմունիստական կազմակերպությունների լոզունգներով, բանվորագյուղացիական մասսաների առաջ իշխանությունը գրավելու հարց դրեց և վերածվեց զինված ապստամբության։ Ապստամբության գրոշը առաջինը բարձրացրեց Ալեքսանդրոպոլը, որտեղ ընտրվեց Հայաստանի Ռազմա-ռևոլյուցիոն կոմիտե։ Ալեքսանդրոպոլին հետևեցին Կարսը, Սարիղամիշը, Նոր Բայազետը, Ղազախ-Շամշադինը, Զանգեզուրը և այլ վայրեր։ Մոտ մեկ ամիս Հայաստանն ընդգրկված էր ապստամբության կրակով։ Կոմունիստներն ամենուրեք հանդես եկան որպես Հայաստանի աշխատավորության այդ պանծալի ելույթների կազմակերպիչներ և ղեկավարներ։

Դաշնակները, բլոկ կնքելով մյուս կոնտրռևոլյուցիոն պարտիաների հետ, օտարերկրյա իմպերիալիստների հովանավորությամբ արյան մեջ խեղդեցին Հայաստանի բանվորների, գյուղացիների և զինվորների հերոսական ապստամբությունը հանուն Սովետական իշխանության։ Հերոսի մահով ընկան անձնվեր ռևոլյուցիոներներ, Կոմունիստական պարտիայի հավատարիմ զավակներ Ս. Ալավերդյանը, Հ. Սարուխանյանը, Բ. Ղարիբջանյանը, Ս. Մուսայելյանը, Ե. Սևյանը, Ղ. Ղուկասյանը, Բ. Հարությունյանը, Վ. Ալեքսեևը, Ե. Մկրտումյանը, Բ. Բատիկյանը և շատ ուրիշներ։ Դեռևս այն ժամանակ Մայիսյան ապստամբությունը Հայաստանում գնահատվեց որպես աշխատավոր մասսաների հերոսական ռևոլյուցիոն-ազատագրական շարժում։ Հակառակ դաշնակների հերյուրանքների, ապստամբության մասին հիացմունքով գրեցին ոչ միայն Ռուսաստանի և Անդրկովկասի, այլև արտասահմանյան շատ պրոգրեսիվ թերթեր։ Վրաստանի Կոմպարտիայի Կենտկոմի օրգան «Կոմունիստ Գրուզիի» թերթը Հայաստանի աշխատավորության մայիսյան ելույթնե-

[1] Տե՛ս „Исторический вестник" (Тбилиси), 1955, № 8, էջ 240—241։
[2] Տե՛ս Г. К. Орджоникидзе. Статьи и речи, т. I, էջ 113—114։

որ բնորոշեց որպես «պայծառ էջ հայ ժողովրդի պատմության մեջ»[1]։ 1921 թ. Բուլղարիայի կոմունիստական պարտիայի հայկական խմբի օրգան «Կարմիր լուրեր» թերթը մայիսյան ապստամբության առաջին տարեդարձին նվիրված «Խոնարհինք ինկած նահատակներուն առջև» առաջնորդողում գրում էր. «Գլխարկնիդ վար առեմ, պրոլետարներ։

Ամբողջ Խորհրդային Հայաստանը և աշխարհի վրա ցրված անոր բոլոր քաջ զավակները այս վեհ տարելիցին խորապես կը խոնարհին նահատակներուն հիշատակին առջև։ Այս խոնարհությունը մարդկային ամենաերկարատև կյանքեն ավելի կարժե։

Անոնք իրենց համար կարճ ապրեցան, բայց հավիտյան պիտի ապրին սերունդներու համար»[2]։

Մայիսյան ապստամբության հակիրճ, բայց խոր ու սպառիչ գնահատականը տվել է Ալ. Մյասնիկյանը 1921 թ. մայիսի 10-ի իր ելույթում։ «Խորհրդային իշխանության սկիզբը,— ասել է նա,— անցյալ տարվա մայիսյան ապստամբությունն է։ Դեռ այն ժամանակ կարող էինք ասել, որ Խորհրդային իշխանության հաղթանակը ապահովված է քանի կա աշխատավորությունը, որի վրա Խորհրդային իշխանությունը կարող էր հենվել երկու ոտքով։

Այսօր մենք ծունկ չոքենք Ալեքսանդրոպոլի հերոսների առաջ։ Նրանք արին այն, ինչ որ պիտի անեին։ Դասեր պիտի առնենք Ալեքսանդրոպոլի ապստամբությունից։ Ամենագլխավոր դասը դա այն գիտակցությունն է, որ Հայաստանի աշխատավորության համար չկա փրկություն առանց Խորհրդային իշխանության»[3]։

Մայիսյան ապստամբության օրերին Հայաստանի աշխատավորները անցան քաղաքացիական պատերազմի հիանալի դպրոց, դասեր քաղեցին Թուլ տրված սխալներից և կոմունիստական կազմակերպությունների ղեկավարությամբ շարունակեցին իրենց հերոսական պայքարը Սովետական իշխանության հաղթանակի համար։ Այս պայքարի կազմակերպման ու հաղթական ավարտի գործում անգնահատելի նշանակություն ունեցավ Հայաստանի Կոմունիստական (բոլշևիկների) պարտիայի կազմակերպական ձևավորումը, որը տեղի ունեցավ պարտիայի Կենտրոնական Կոմիտեի որոշմամբ ու ղեկավարությամբ 1920 թ. ամռանը։

Պարտիայի որոշումներին լիովին համապատասխան 1920 թ. փետրվարին ստեղծվել էր Ադրբեջանի Կոմունիստական (բոլշևիկների) պարտիան, որն անմիջականորեն գլխավորեց սովետական կարգերի հաղթանակը Ադրբեջանում։ 1920 թ. ապրիլին ՌԿ(բ)Պ Կովկասյան Երկրային Կոմիտեի փոխարեն ստեղծվել էր պարտիայի Կենտկոմի Կովկասյան Բյուրո, որի աշխատանքները անմիջականորեն գլխավորում էր Ս. Օրջոնիկիձեն։ 1920 թ. մայիսի վերջին Թիֆլիսում գումարվում է Վրաստանի և Հայաստանի պարտիական կազմակերպությունների խորհրդակցություն, որտեղ որոշվում է Վրաստանի և Հայաստանի սահմաններում գործող պարտիական կազմակերպությունները միավորել իբրև առանձին կոմունիստական պարտիաներ, ՌԿ(բ)Պ անբաժան մասեր՝ ենթակա Կովկասյան ընդհանուր պարտիական կենտրոնին։ Պարտիա-

[1] «Կոմունիստ Գրուզիի», 1920, 29 հոկտեմբերի, № 9։
[2] «Կարմիր լուրեր» (Թիֆլիս), 1921, 26 հունիսի։
[3] «Կոմունիստ» (Երևան), 1921, 13 մայիսի, № 82։

յի Կենտկոմը և նրա Կովկասյան Բյուրոն 1920 թ. ամռանն ու աշնանը բազմիցս քննարկեցին երկու եղբայրական կոմպարտիաների ստեղծման, նրանց խնդիրների, ղեկավար օրգանների հարցը, օգնեցին նրանց ամրապնդվելու։

Պարտիայի ղեկավարությամբ լայն աշխատանք է ծավալում Հայաստանի կոմերիտմիությունը։ Ամռանը ստեղծվում է Հայաստանի բանվորա-գյուղացիական երիտասարդության Կենտրոնական կազմբյուրո, որի կազմում մրցում են Ա. Խանջյանը, Ա. Բուդաղյանը և ուրիշներ։

Վրաստանի Կ(բ)Պ-ն և Հայաստանի Կ(բ)Պ-ն, ինչպես դրանից առաջ Ադրբեջանի Կ(բ)Պ-ն ձևավորվեցին որպես լենինյան պարտիայի հավատարիմ ու անբաժան ջոկատներ, լիովին համապատասխան պարտիական շինարարության լենինյան գծին։ Հայ ժողովրդի կյանքում պատմական նշանակություն ունեցող այս կարևորագույն հարցում Հայաստանի բոլշևիկները միահամուռ ցույց տվին իրենց համախմբվածությունը Վ. Ի. Լենինի, պարտիայի Կենտկոմի շուրջը, նրանք ամենայն վճռականությամբ և հետևողականությամբ մերժեցին այն ընկերների միանգամայն սխալ ու վնասակար տեսակետը, որոնք հակառակ պարտիայի VIII համագումարի ուղղակի ցուցումներին կանգնած էին ինքնուրույն կոմունիստական պարտիաների ֆեդերացիա ստեղծելու տեսակետի վրա։

Դաշնակցական դաժան տեռորի պայմաններում, երբ բարբարոսաբար հալածվում էր ամեն մի ռևոլյուցիոն ելույթ, Հայաստանի բոլշևիկների մի զգալի մասը շարունակում էր իր գործունեությունը Բաքվում։ Այնտեղ էր գտնվում Հայաստանի Կոմպարտիայի Կենտկոմի արտասահմանյան բյուրոն, որը Ադրբեջանի կոմունիստների օգնությամբ ստեղծում է հրատարակչություն, պարտիական դպրոց և սերտ կապեր պահպանելով Հայաստանի ընդհատակում աշխատող կոմունիստների հետ, ուղղություն էր տալիս նրանց աշխատանքին։ Հայաստանի պարտիական կազմակերպության ներկայացուցիչները հաճախակի լինում էին Բաքվում, ակտիվ մասնակցություն են ունենում սեպտեմբերին տեղի ունեցած Արևելքի ժողովուրդների առաջին համագումարին, Հայաստանի կոմունիստական կազմակերպությունների Բաքվում գումարված կոնֆերանսին, որոնք խոշոր նշանակություն ունեցան ռևոլյուցիոն ուժերի մոբիլիզացման գործում։

* * *

1920 թ. աշնանը նոր վճռական հաղթանակներ տանելով քաղաքացիական պատերազմի ռազմաճակատներում պարտիայի Կենտրոնական Կոմիտեն և Սովետական կառավարությունը մի շարք միջոցառումներ են կիրառում ամբողջ Անդրկովկասում Սովետական իշխանության հաղթանակն ապահովելու, հայ ժողովրդին ծանր վիճակից փրկելու համար։ Պարտիայի Կենտկոմի, ինչ-

---

[1] Հայաստանի Կոմունիստական (բոլշևիկների) պարտիայի կազմակերպական ձևավորման հետ կապված մի շարք հարցերի լուծման համար կարևորագույն նշանակություն ունի նրա հիմնադիրներից մեկի, պարտիայի հնագույն գործիչ Ա. Մռավյանի «Ե՞րբ և ինչպես է հիմնադրվել Հայաստանի Կոմունիստական (բոլշ.) կուսակցությունը» հոդվածը, որը տպագրվել է «Սորհրդային Հայաստան» թերթի 1923 թ. մայիսի 30-ի և հունիսի 1-ի համարներում (№№ 114, 116), 1928 թ. այն տպագրվել է առանձին բրոշյուրով, իսկ 1930 թ. վերահրատարակվել է «Ընկեր Մռավյանի հոդվածների, հիշողությունների ժողովածու» գրքում։

պես նաև նրա Կովկասյան Բյուրոյի ու Ադրբեջանի Կ(բ)Պ քաղբյուրոյի նիստերում բազմիցս քննարկվում է Հայաստանում ստեղծված դրության հարցը։ Հայաստանի աշխատավորությանն օգնություն կազմակերպելու նպատակով հոկտեմբերին Վ. Ի. Լենինի մանդատով Երևան է դալիս ՌՍՖՍՌ-ի լիազոր ներկայացուցիչ Բ. Վ. Լեգրանը հատուկ միսիայով, որի մեջ մտնում էին նաև հին կոմունիստներ Ս. Տեր-Գարրիելյանը և Ա. Հովհաննիսյանը։

1920 թ. նոյեմբերի 29-ին Իջևանի և Դիլիջանի աշխատավորությունը Կոմունիստական պարտիայի ղեկավարությամբ զինված ապստամբություն է բարձրացնում, ստեղծվում է Հայաստանի Ռազմա-ռևոլյուցիոն կոմիտե, որը հռչակելով նոր Սովետական Սոցիալիստական Ռեսպուբլիկայի ծնունդը՝ դիմում է Վ. Ի. Լենինին իրենց ռազմական օգնություն ցույց տալու համար։ Հերոսական XI Կարմիր Բանակի զորամասերը մտնում են Հայաստան և ապստամբների հետ միասին հյուսիսից շարժվում Երևան։ Դեկտեմբերի 2-ին Գ. Կ. Օրջոնիկիձեն հեռագրով հայտնում է Մոսկվա Վ. Ի. Լենինին և Ի. Վ. Ստալինին. «Հենց նոր Երևանից հաղորդում ստացվեց, որ Երևանում հռչակվել է Սովետական իշխանություն, հին կառավարությունը վերացվել է...»[1]։

Վ. Ի. Լենինը անմիջապես ջերմորեն ողջունում է Հայաստանի աշխատավորությանը իրենց երկրում սովետական կարգեր հաստատելու կապակցությամբ։ Դեկտեմբերի 2-ին, Երևան, Ռազմա-ռևոլյուցիոն կոմիտեի նախագահ Սարգիս Կասյանի անունով տված հեռագրում Վ. Ի. Լենինը գրում էր. «Հանձին Ձեզ ողջունում եմ իմպերիալիզմի ճնշումից ազատագրված աշխատավորական Սովետական Հայաստանին։ Ես կասկածում, որ Դուք կգործադրեք բոլոր ջանքերը՝ Հայաստանի, Թուրքիայի, Ադրբեջանի աշխատավորների միջև եղբայրական համերաշխություն հաստատելու համար»[2]։

Ազատագրված Հայաստանի քաղաքներում ու գյուղերում գումարված խանդավառ միտինգներում հայ ժողովուրդն իր երախտագիտության առաջին խոսքն ուղղում է Կոմունիստական պարտիային, Սովետական Ռուսաստանին, ժողովուրդների հանճարեղ առաջնորդ Վ. Ի. Լենինին։ 1920 թ. դեկտեմբերի սկզբին բոլշևիկների ղեկավարությամբ Երևանում գումարված բազմահազար աշխատավորների միտինգը Վ. Ի. Լենինին ուղարկած ողջույնի հեռագրում ասում էր. «Խիտ ու կուռ շարքերով համախմբվելով կոմունիստական կարմիր գրոշակների շուրջը, աշխատավորությունը հանձին Ձեզ՝ ողջունում է Հոկտեմբերյան հեղափոխության առաջնորդին, հեղափոխություն, որի ալիքները խորտակելով և ոչնչացնելով բոլոր արգելքները հասան հեռավոր Հայաստանին»[3]։ Այնուհետև նրանք նշում էին, որ մտնելով սովետական ռեսպուբլիկաների պրոլետարական ընտանիքի մեջ իրենք հետևում են Հոկտեմբերյան ռևոլյուցիայի օրինակին և սովորելով ռուս բանվորների մեծ փորձից, աշխատավորական Ռուսաստանի ու Ադրբեջանի օրինակով ու օգնությամբ համարձակ ու անվախ կգնան դեպի ապագան՝ լիահույս, որ աշխատանքը կհաղթի կապիտալին։

Դաշնակների և նրանց օտարերկրյա տերերի դաժան լծից Հայաստանի ազատագրմամբ հաղթականորեն ավարտվում է ներքին կեղեքիչների և օտար-

[1] Г. К. Орджоникидзе. Статьи и речи, т. I, էջ 142։
[2] Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 31, էջ 350։
[3] «Коммунист», 1920, № 8։

երկրյա բազմաթիվ նվաճողների դեմ հայ ժողովրդի մղած երկարատև ու հերոսական պայքարը, հիմք է դրվում Հայկական Սովետական Սոցիալիստական Ռեսպուբլիկային, սկսվում է հայ ժողովրդի վերածննդի, ազատ ու անկախ կյանքի նոր դարաշրջանը։

Սովետական իշխանության հաղթանակից հետո Հայաստանի Կոմունիստական պարտիան և Սովետական կառավարությունը օգտագործելով Սովետական Ռուսաստանի սոցիալիստական շինարարության փորձը, ռուս մեծ ժողովրդի եղբայրական օգնությամբ, պարտիայի Կենտրոնական Կոմիտեի և անձամբ Վ. Ի. Լենինի ցուցումներով ձեռնամուխ են լինում ժողովրդական տնտեսության վերականգնմանն ու սոցիալիստական վերակառուցմանը։ Այս մեծ գործի իրականացման համար անգնահատելի նշանակություն է ունենում Վ. Ի. Լենինի 1921 թ. ապրիլի 14-ի նամակը «Ադրբեջանի, Վրաստանի, Հայաստանի, Դաղստանի, Լեռնականների ռեսպուբլիկայի կոմունիստ ընկերներին»[1], որում տրված է ամբողջ Կովկասի կոմունիստների համար հետագա գործունեության մի ամբողջ ծրագիր։ Կատարելով Վ. Ի. Լենինի իմաստուն ցուցումները, Անդրկովկասի բոլշևիկները լայն աշխատանք ծավալեցին ժողովուրդների եղբայրական դաշինքն ամրապնդելու, Ադրբեջանի, Վրաստանի և Հայաստանի տնտեսական ու քաղաքական զարգացման համար։ Այդ ուղղությամբ մեծ դեր կատարեց Վ. Ի. Լենինի նախաձեռնությամբ 1922 թ. ստեղծված Անդրկովկասյան ֆեդերացիան։ Լենինյան ազգային քաղաքականության պատմական խոշոր հաղթանակն էր ՍՍՌՄ-ի ստեղծումը, որի կազմում մյուս եղբայրական ռեսպուբլիկաների հետ միասին մտավ նաև իրավահավասար ու սուվերեն Հայկական ՍՍՌ-ն, որի ուժն ու հզորությունը միասնական Սովետական սոցիալիստական պետության մեջ է, Կոմունիստական պարտիայի իմաստուն ղեկավարության մեջ։ Մարգարեական են մեծ Լենինի խոսքերը այն մասին, որ «Սովետների մեր սոցիալիստական ռեսպուբլիկան հաստատուն կերպով կանգնած է մնալու բոլոր աշխատավոր մասսաների առաջ որպես միջազգային սոցիալիզմի ջահ և որպես օրինակ»[2]։

Սովետական իշխանության տարիներին, մեր երկրի զարգացման բոլոր էտապներում Հայաստանի կոմունիստական կազմակերպությունները ղեկավարվելով պարտիայի որոշումներով պատվով են կատարել իրենց առաջադրված խնդիրները։ Երկրի ինդուստրացման և գյուղատնտեսության կոլեկտիվացման ասպարեզում պարտիայի քաղաքականության հաղթանակը, կուլտուրական ռևոլյուցիան արմատական վերափոխումներ առաջացրին հայ ժողովրդի տնտեսական ու հասարակական-քաղաքական կյանքում։ Մեր հայրենիքին սպառնացող ահեղ վտանգի տարիներին, երբ գերմանա-ֆաշիստական զավթիչները ուզում էին հետ շրջել պատմության անիվը, զրկել սովետական ժողովրդին իր մեծ նվաճումներից, Հայաստանի աշխատավորությունը ՍՍՌՄ ժողովուրդների մեծ ընտանիքում զենքը ձեռքին հանդես եկավ օտարերկրյա զավթիչների դեմ։ Հայաստանի աշխատավորները և՛ ռազմաճակատում, և՛ թիկունքում անմահ սխրագործություններ կատարեցին։ 1941-1945 թթ. Հայրենական Մեծ պատերազմի տարիներին 106 հայ ռազմիկներ դարձան Սովետական Միության հերոսներ, իսկ հայ ժողովրդի 60 զավակներ

[1] Տե՛ս Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 33, էջ 402-404։
[2] Նույն տեղում, հ. 26, էջ 378։

շնորհվեց գեներալական բարձր կոչումներ։ Ռազմաճակատում մարտական սխրագործությունների համար 66 802 հայ ռազմիկներ, իսկ թիկունքում անձնվեր աշխատանքի համար 376 038 մարդ արժանացան կառավարական շքանշանների ու մեդալների։

Հայրենական Մեծ պատերազմի հաղթական ավարտումից հետո Հայաստանի Կոմունիստական պարտիան ղեկավարեց ռեսպուբլիկայում ժողովրդական տնտեսության վերականգնման և հետագա զարգացման, կոմունիզմի կառուցման համար մղվող պայքարը։ Կատարելով պարտիայի XX և XXI պատմական համագումարների որոշումները ռեսպուբլիկայի աշխատավորները հասան ժողովրդական տնտեսության և կուլտուրայի հուժկու վերելքի։

Ինչպես ամբողջ Սովետական Միությունը, այնպես էլ Սովետական Հայաստանը նոր ու էլ ավելի մեծ նվաճումներ ձեռք կբերեն յոթնամյա պլանի հաջող կենսագործման հետևանքով, որը մի խոշոր քայլ կլինի կոմունիզմի նյութա-տեխնիկական բազայի ստեղծման, ռեսպուբլիկայի էկոնոմիկայի հետագա ծաղկման ճանապարհին։

Սովետական հզոր հայրենիքի անբաժան մասը կազմող Սովետական Հայաստանը ամբողջ հայ ժողովրդի հպարտությունն է, նրա լավագույն երազների իրականացումը։ Հայաստանի Կոմունիստական պարտիան, որպես ՍՄԿՊ-ի մարտական ջոկատներից մեկը այժմ ավելի ու ավելի է համախմբում հայ ժողովրդին լենինյան փառապանծ պարտիայի շուրջը, հարազատ Սովետական կառավարության շուրջը, մոբիլիզացնում է նրանց ուժերը հաջողությամբ կատարելու և գերակատարելու 7-ամյա պլանի հոյակապ խնդիրները մեր երկրում կոմունիզմի կառուցման համար։

ОБРАЗОВАНИЕ КОММУНИСТИЧЕСКОЙ ПАРТИИ АРМЕНИИ И ПОБЕДА СОВЕТСКОЙ ВЛАСТИ В АРМЕНИИ

Г. Б. ГАРИБДЖАНЯН

(Резюме)

Армянский народ вместе со всеми народами Советского Союза в условиях большого политического и трудового подъема встретил сорокалетие со времени образования Коммунистической партии Армении и установления Советской власти в стране. В статье показано, что эти огромной исторической важности события были подготовлены всем ходом революционного движения в России. После большой организационной работы, вслед за сентябрьским совещанием 1919 г. и январской конференцией 1920 г., большевистские организации Армении решением ЦК РКП(б) летом 1920 г. организационно оформились как Коммунистическая партия Армении. КПА была создана в полном соответствии с ленинской интернациональной линией в партийном строительстве, как составная, неотъемлемая часть ленинской партии, одним из ее боевых отрядов.

Кавказское бюро ЦК РКП(б), коммунистические партии Азербайджана и Грузии оказывали большую помощь Коммунистической партии

Армении в укреплении ее рядов, в успешном руководстве революционным движением в Армении.

Организационное оформление Коммунистической партии Армении имело огромное значение для армянского народа, для его борьбы против дашнаков и их иноземных хозяев, для установления и упрочения Советской власти в Армении. Коммунистическая партия указывала единственно правильный путь освобождения армянского народа и возглавила его борьбу за счастливое будущее.

Советская Армения — детище Великой Октябрьской социалистической революции. Образование 29 ноября 1920 г. Армянской Советской Социалистической Республики явилось победоносным завершением долгой и героической борьбы армянского народа против внутренних эксплуататоров и многочисленных иноземных захватчиков. Эта историческая победа одержана кровью лучших сынов армянского народа и в первую очередь коммунистов.

В. И. Ленин внимательно следил за событиями в Армении. РСФСР оказывала Советской Армении огромную материальную помощь.

За 40 лет Советской власти Армения из отсталой и нищей страны превратилась в передовую социалистическую республику. Всеми своими достижениями, своей свободной, счастливой жизнью армянский народ обязан великой и мудрой Коммунистической партии, гениальному вождю трудящихся всего мира В. И. Ленину. В могучей братской семье советских народов трудящиеся Армении под руководством Коммунистической партии отдают все свои силы великому делу построения коммунизма в Советской стране.